ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---------» ---------- 2023թ. **N ------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ___

(կազմված՝ 09.06.2023թ. և բաղկացած՝ 2 էջից)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2023թ.

N_____-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

_____Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

03.08.2011թ.

Գրանցման համար՝ 222.215.26767

ՀՎՀՀ 01249502

03.08.2011թ.-ին գրանցված

կանոնադրության

թիվ ____ փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«___» _____ 2023թ.

աշխատակից՝

«ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Փոփոխություն)

ԵՐԵՎԱՆ 2023

«Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Կանոնադրության 2.3 կետը լրացնել հետևյալ դ) ենթակետով. «Ամառային դասընթացի կազմակերպում»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 03.08.2011թ. պետական ռեգիստրում գրանցված« Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

««ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետև՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Նախագծի համար հիմք է հանդիսացել «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 05.06.2023 թվականին հ.53 գրությունն ուղղված Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռոման Համբարձումյանին՝ «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

Նախագծով առաջարկվում է «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել փոփոխություն և կանոնադրության 2.3 կետը լրացնել հետևյալ դ) ենթակետով. «Ամառային դասընթացի կազմակերպում»:

Ամառային դասընթացի կազմակերպման առաջարկությունը պայմանավորված է ինչպես դպրոցի սաների ծնողների, այնպես էլ բնակիչների խնդրանքով:

Համաձայն օրինակելի ուսումնական պլանի հունիսի 30-ին ավարտվում է ուսումնական տարին: Նախագծով նախատեսվում է հունիսի 30-ից կազմակերպել ամառային դասընթացներ, որի արդյունքում կապահովվի երեխաների զբաղվածությունը, ինչպես նաև հավելյալ ֆինանսական միջոցներ կմուտքագրվեն դպրոցի բյուջե:

Որոշման ընդունումը պայմանավորված է «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման, նոր ուսումնական տարում աշակերտների ավելացման և կազմակերպության սեփական եկամուտները ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում ավելացնելու հնարավորությամբ:

Ամառային դասընթացից ստացված եկամուտը կարող է ուղղվել կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացմանն ու աշխատակիցների վարձատրությանը:

Միաժամանակ այն հնարավորություն է տալիս ամառային արձակուրդների ընթացքում ներգրավել երեխաներին տարբեր խմբակների՝ ապահովելով նրանց ստեղծագործական և գեղագիտական դաստիարակությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել ««Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում ծախսերի փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ